«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Non-governmental organization "Armenian Lawyers' Association"
Общественная организация "Армянская ассоциация юристов"

ՀՀ, ք. Երևան 0010, Նալբանդյան 7, գրասենյակ 2
7 Nalbandyan Str., Suite 2, Yerevan 0010, RA
РА, Ереван 0010, ул. Налбандяна 7, офис 2

(+374 10) 540199
info@armla.am

№ 01/05
«19» 01 2022 թ.

Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատար
Գագիկ Ջհանգիրյանին

Հարգելի պարոն Ջհանգիրյան,

Դատական դեպարտամենտի ղեկավարի՝ Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահի 2022 թվականի հունվարի 3-ին Ձեզ հասցեագրված գրությանը ի պատասխան ուղարկված 2022 թվականի հունվարի 11-ի թիվ Ե-129 գրության վերաբերյալ տեղեկացնում ենք, որ համաձայն «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշման՝ Բարձրագույն դատական խորհուրդը հանդիսանում է մի շարք գործողությունների պատասխանատու/համակատարող մարմին՝ համաձայնությամբ, ինչը, ի թիվս այլնի, ենթադրում է, որ ԲԴԽ-ն տիրապետում է համապատասխան գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկություններին, և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն պետք է պատշաճ կարգով տրամադրի հայցած տեղեկությունները հետևյալ պատճառաբանությամբ՝

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ **յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:** Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է բոլոր այն դեպքերը, երբ տեղեկատվության տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը: **Տվյալ հոդվածի 1-ին մասի 1-ից 5 կետերում նշված դեպքերից և ոչ մեկը այս պարագայում առկա չէ, հետևապես սույն իրավակարգավորումը կիրառելի չէ այս դեպքում:**

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տեղեկություն է տրամադրվում **տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին (...)**: Ձեր կողմից չի տրամադրվել որևէ հղում, որը հստակ կերպով պարունակում է հայցված ամբողջական տեղեկատվությունը, հետևապես Ձեր կողմից տրամադրած գրավոր պատասխանը չի համապատասխանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1) ապահովել տեղեկությունների **մատչելիությունը և հրապարակայնությունը**. *(...)*
3) տեղեկություններ փնտրող անձին **տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն:**

Բացի վերոգրյալից, Իրավաբանների հայկական ասոցիացիայի՝ 2022 թվականի հունվարի 3-ի թվով 4 մեջ հիշատակված Ռազմավարությունից բխող համապատասխան գործողությունների ծրագրի մշտադիտարկման աշխատանքների շրջանակներում կազմակերպվելիք առցանց ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցության մասով, հորդորում ենք ԲԴԽ-ին չխուսափել քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունից և ապահովել ՀՀ բարձրագույն դատական խորհրդից համապատասխան մասնագետների մասնակցությունը տվյալ ֆոկուս խմբային քննարկումներին:

Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալը, խնդրում ենք վերանայել մեր՝ 2022 թվականի հունվարի 3-ի թվով 4 գրությունները և օրենքով սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել հարցված տեղեկությունները:

Հարգանքով՝

Կարեն Ջաղոյան,

Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ

Կատարող՝

Սյուզաննա Սողոմոնյան

Դատաիրավական և հակակոռուպցիոն հարցերով փորձագետ